Քու աղ ու հացին քոռ մը-տիկ տամ, թէ սուտ ըլեմ ա-սելիս.

Քու անուշ բառովը գիդենայ,

Քու օխտը պօրտի մեղքին տէր ըլեմ, թէ...

Օջաղի խէր ու բարաքեա-թը վգայ.

Ցող ու ջուրը վգայ.

Ցոքիս սատանի փայ դառ-նայ, թէ...

## ՕՐՀՆԱՆՔ

### Մանուկներին

Արեդ ապրի.

Արևիդ մեռնիմ.

Արևով կշտանաս.

Արևս արևիդ ղուրբան, ջա-նըս ջանիդ։

Բարի իշատակ ըլիս.

Բարին քեզ մօտ.

Գլխիդ ու արևիդ մատաղ.

Գլխովդ պտիտ գամ.

Ըմբրաբև ըլիս.

Ծառի պէս ծաղկիս, ծաղկի պէս ֆոտ տաս.

Ծլիս, ծաղկիս.

Կարմիրդ կապենք.

Հալալ կաթնակերի արժա-նի ըլիս։

### Նորապսակներին.

Աչքի լուսով պառաւիք.

Աստուած անփոշմանելի ա-նի.

Բարով սև օր չը տեսնուք.

Թադ ու պարծանք ըլիք.

Թագիդ հետ երգարիս, թա-գուհի։

Ճղկճղկնոտիս.

Մի բարցի ծերանաք.

Մուրազիդ հասնուս.

Ձեր առջնեքը տղայ ըլի.

Տէրդ ապրի.

Փնջփնջնոտիս.

Ցոգուդ վրայ լիս վէր գայ.

Ցոգիդ սրբերի ղասը ղա-սուի.

### Սկեսուրը հարսին.

Անուշով հարս դառնաս, բարով խէրով իմ տարսը դառ-նաս.

Ազու ծիծը քեզ բարեխօս.

Աչքի լըսով, ցամաք աչքով ապրիք.

Բար ու նուբարը արևներիդ.

Ձախու ծիծս քեզ պհապան.

Շէն մնայ քու հօր տունը.

Որդկերանցդ արևի խէրը տեսնուս.

Քու աչքը քի էրնէկ տայ.

Քու գլխի տիրոջ հետ եր-գարիս.

Քու տէրդ ապրի.

Քու տէրդ գլխիցդ անպա-կաս ըլի.

Ծոցինդ ապրի.

### Ծննդկանին.

Աշխարքին պէտքական, ա-մենքին սիրեկան-դիրեկան ըլի.

Աչքդ լիս, բաղդաւոր զա-ւակ ըլի.

Աստոծ օխտը ձեռով քեզ բաշխի.

*Աստծու աչքը վրէդ քաղցր ըլի․*
*Հօրով մօրով վենձանայ.*
*Մնացական զաւակ ըլի․*
*Հազար ճուխկը տաս.*
*Օխտը որդու հէր (կամ մէր) ըլիս․*

## Տառսէրին.

*Կուռդ երգէն ըլի․*
*Կուռդ կանանչ.*

## Հիւանդին.

*Աստոծ ինքը ճար անէ քու անճար ցաւին։*
*Աստոծ լաւութին տայ, առողջութին ու սաղ սլամաթ ջան տայ։*

## Սքաւորին.

*Արքայութենի փայ ըլի․*
*Աստոծ փոքին լուսաւորի․*
*Աստոծ ձեր սիրտը մխիթարէ։*
*Աստոծ յիշատակնին օխնի․*
*Աստոծ նրա դատաստանը քաղցր անէ։*
*Աստոծ նրա մեղագիրը ջընջէ, կենած դաւթարին գրէ։*
*Դուք ըլէք ողջ։*
*Ինչ նրան օր ա պկասել, Աստոծ բաշխի իր ըրեխանցը։*
*Լիս վէր գայ գըրեզմանին.*
*Հոգով սրբով մխիթարուիք․*
*Ձեր գլուխն ապրի․*
*Նրա փոգին բարեխօս ըլի իր յիշատակներին։*
*Ողորմի փոգուն.*

## Ծերունիներին.

*Արածդ որդկերանցդ աղաքը գայ։*
*Լիս դառնաս, լսի փայ ըլիս.*
*Լիս հոգով զարդարուես.*
*Հայր Աբրահամու գոգը գըտնաս։*
*Որդկերանցդ մի բուռը հողին արժանի ըլիս։*
*Սիմոն ծերունու դասը դասուես։*
*Քի արքայութին.*
*Փայըդ Աստծանէ առնուս։*

## Քահանային.

*Աստոծ կարգիդ հաստատ պահէ։*
*Ժամ պատարագի ըլիս.*
*Կարգիդ հետ երգարիս.*
*Մուղարար (միշտ) աղօթարար ըլիս։*
*Պաշտըմ պատարագի ըլիս։*
*Փառոց կենաս։*

## Սեղանն օրհնելիս.

*Աստուած օխնէ, շէն պահէ, ձեր սեղանը շէն պահէ։*
*Աստծու տան հետ շէն կենաք, շէն ու շհար ըլիք, բահր բհար ըլիք։*
*Ես պակասացրի, Աստոծ էւելցնի։*
*Համաշայ ձեր սուփրէն գըցած ըլի, գաւով գինին դրած ըլի։*
*Ձեր տունը հայր Աբրահամու օջախը դառնայ։*
*Օջախդ շէն։*

### Նոր հանդերձ հագնողին.

Առողջութինի ըլի·
Բարով մաշես, հինն ինձ բախշես· կամ—բարով մաշես, հազարը մաշես։
Շնհաւոր ըլի·
Ուրախ օրով, կուշտ փորով մաշես։
Ջան սաղութենի ըլի·
Փեսայութինի, հարսնութինի ըլի·

### Մատաղ անողին.

Արեւան ղարն ըլի·
Սաթեկան ոչխարն ըլի·
Արնափոխ ըլի·
Առ Աստծ հասնու։
Մատաղդ ընդունելի ըլի·
Սրտիդ մուրազին հասնիս։

### Ճանապարհորդին.

Աջն ու խաչը քեզ պահապան։
Աստուած համաշայ հետդ ըլի·
Բարի հրեշտակը քեզ ուղեկից ըլի, բարով տեսութինիդ արժանանանք·
Բարի ճամփայ, բարով գընաս, բարով գաս։
Ճամփէդ փունջ մանիշակ ռանայ։

### Բարեւ բերողին.

Բարին արեւիդ·
Բարին բարեւ բերողին էլ, ղրկողին էլ·
Բարում կենաս, սաղ ըլիս։
Բարու նուբարը վրէդ·

### Նոր տուն շինողին.

Աստծու շէնքն ու շնորքը վրէն։
Բարով վայելէք·
Դովլաթբաշին աղօթող ըլի·
Էս տան հիմքը հաստատ ըլի·
Մէջը ծերանաք·
Շէն մնայ էս տունը·
Շնորհաւոր ըլի ձեր նոր շինութինը·
Տան բարի հրեշտակը անխռով ըլի·
Կանաչ ու կարմիր օրով ապրես։

## ԱՆԷԾՔ.

### Մատաղահաս աղջիկներին անիծելիս.

Հէզգու գաւակ ընկնիս·
Ծամդ փէտվի·
Գրճկվես դու·
Վարսդ վէր գայ·
Քու մաֆռաշդ կապած մնայ·
Մի հատ քօշով օխտը տուն մտնես, թէ տուն չգտնես, օճի բուն մտնես, օճի բնումն էլ ութ օր քուն մտնես։
Մազս ըմբարես·
Շորերդ անծակ մաշես·
Ոչ բզըզնես·
Քօղրած քուշուշկի հասրաթ մեռնես։